

ԿԱՐԵՒՈՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀԱՄԱՀԱՎԱՍԱՐ ՎԱՐՎԵՑՈՂՈՒԹՅԱՆ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Համահավասար Վարվեցողության Գերատեսչության (ՀՎԳ) հիմնական խնդիրն է համահավասար վարվեցողության պարտականությունների խախտման հետևանքով ներկայացված բողոքների քննությունը եւ համահավասար վարվեցողության իրավունքների վերականգնումը:

Գերատեսչությունը զբաղվում է այն քաղաքացիների իրավունքների վերականգնման գործով, որոնք ենթարկվել են խտրականության:

Համաձայն Համահավասար Վարվեցողության օրենքով պաշտպանվող զանազանությունների, արգելվում է վնասաբեր խտրականությունը:

Պաշտպանվող զանազանությունների շարքին պատկանում են՝ սեռ, ցեղային պատկանելիություն, կաշվե գույն, ազգություն, ազգային պատկանելիություն, տարիք, մայրենի լեզու, թերարժեքություն, առողջական վիճակ, մայրություն (հղիություն) կամ հայրություն, ընտանեկան դրություն, սեռական հակումներ, սեռական նույնականություն, ծագում, հասարակական դրության, ունեցվածք, կրոնական կամ աշխարհայացքային համոզմունքներ, քաղաքական կամ այլ հասարակական կարծիք, զբաղվածության իրավական վիճակի թերի լինելը կամ սահմանափակ ժամկետը, որեւէ հասարակական միավորման անդամություն, եւ այլ վիճակներ:

Եթե Դուք այնպես էք զգում, որ ձեր **օրենքով պաշտպանվող զանազանությունը ենթարկվում է խտրականության**, կամ տեղեկություն ունեք նման վիճակում գտնվող այլ անձի մասին, դիմեք գերատեսչություն (ՀՎԳ):

ՀՎԳ –ն միայն այն դեպքում կարող է սկսել հետաքննություն, եթե **իրավախախտման մասին տեղեկություն ստանալուց հետո անցել է ոչ ավելի քան մեկ տարի, եւ խախտումը կատարվել է ոչ ավելին քան երեք տարի առաջ:**

ԽՏՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՄԱԿՆԵՐԸ

Անմիջական խտրականություն է համարվում, եթե անհատը կամ անձանց մի խումբ վնասաբեր խտրականության է ենթարկվում որեւէ օրենքով պաշտպանվող զանազանության պատճառով, ի հակառակ այլ անձի կամ խմբի, որն գտնվում է նման համեմատելի վիճակում:

Անուղակի խտրականություն է համարվում է այն վիճակը, երբ որ գործողությունը թվում է չեզոք եւ անկողմնապահ, արտաքննապես տպավորություն է ստեղծվում որ չեն խախտվում Համահավասար Վարվեցողության պահանջները, սակայն օրենքով պաշտպանված հատկություններով տիրապետող անձանց իրավունքները արտակարգ խիստ խախտվում են:

Օրինակ, անուղակի խտրականությունը իրականանում է այն դեպքում, երբ որ որեւէ աշխատանքային պարտականություններ կատարելու համար անհիմն պահանջվում է առնվազն 10 տարի անընդհատ աշխատանքային հարաբերություններ, եւ դրանով այդ աշխատանքային հնարավորությունների իրավունքից զրկվում են բոլոր այն կանայք, որոնք ծննդաբերության կամ երեխայի խնամքի պատճառով ստիպված են եղել ընդհատել աշխատանքային հարաբերությունները (այսինքն 25 եւ 35 տարեկան կանանց մեծամասնությունը):

Հետապնդում՝ այս հասկացողության տակ ընդհանրապես ենթադրվում է երկար ընթացքի հետեւանքը, որն կարող է կրել վավաշոտական կամ այլ բնույթ: Այն դեպքում է իրականանում, երբ որ ի դեմ պաշտպանվող զանանգանությունների հատկություններով շնորհված անձի հանդեպ ստեղծվում է հարձակողական, ամոթալի, երկյուղային, մարդկային արժանապատվությունը ստորացնող մթնոլորտ:

Ապօրենի մեկուսացում այն դեպքում է համարվում, երբ որ վերը նշված հատկությունների հիմունքով, առանձին անձինք, կամ անձանց խումբ, ի տարբերություն նույն կամ նման վիճակում գտնվող այլ անձանց, կամ անձերի խմբի, առանց որեւէ օրինային հիմքերի, աշխատում է մեկուսացնել: Հունգարիայում հաճախ այս ամենը դրսեւորվում է դպրոցներում հանդեպ գնչու ծագումով աշակերտների մեկուսացումով:

Այն ժամանակ ենք խոսում **վրեժխնդրության** մասին, երբ որ համահավասար վարվեցողության պահանջների խախտման պատճառով հանդես եկող անձինք, իրենց հայտնաց կարծիքների հետեւանքով պատժի են ենթարկվում:

Ո՞՞՞՞՞ ԿԱՐՈՂ Է ԴԻՄԵԼ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅԱՆԸ ԵՒ ՈՒ՞Ս ԴԵՍ Է ՀՆԱՐԱՎՈՐ ԲՈՂՈՔ ՀԱՅՏԵԼ

Տուժված բնական անձը (անձամբ կամ հավատարմատար անձի միջոցով), իրավական դեմքը, կամ իրեն հավատարմատարը, ներկայացուցչական կազմակերպությունը, կամ հասարակական կազմակերպությունը գերատեսչությանը ուղղված խնդրանքով իրավի է նախաձեռնել հետաքննություն:

Բողոքը կարելի է ուղել ի դեմ՝

- պետական կամ ինքնավարության կազմակերպությունների,
- պետական իրավունքներով օժտված կազմակերպությունների,
- Հունգարիայի Բանակի եւ օրինական կարգը պահպանող մարմինների,
- հասարակական ծառայությունների, լուսավորության, սոցիալական երեխաների պաշտպանության, մշակույթի, առողջապահության ծառայություններ ապահովող հիմնարկների,
- կամավոր ապահովագրական գործակալությունների, մասնավոր ապահովագրական գործակալությունների,
- կուսակցությունների եւ բոլոր այլ բյուրոյաին մարմինների:

Գերատեսչությունը իրավի է պաշտոնապես էլ նախաձեռնել հետաքննություն ի դեմ՝

- Հունգարական պետության,
 - տեղական եւ ազգային ինքնավարությունների եւ նրանց պատկանող մարմինների,
 - պետական իրավունքներով օժտված կազմակերպությունների,
 - Հունգարիայի Բանակի եւ օրինական կարգը պահպանող մարմինների,
- եթե տիրապետում է փաստացի տեղեկություններով հավասար վերաբերմունքի պահանջների խախտման մասին:

Գերատեսչությունը իրավի է քննել եւ միջամտել նաեւ մասնավոր ոլորտի շրջանակներում տեղի ունեցող որոշ դեպքերում եւս: Այն են՝

- գործատերի կողմից առաջարկված աշխատանքի հետ կապված իրավական հարաբերությունները,
- պետական նպաստների օգտագործման ընթացքում անհատի եւ ընկերային ձեռնարկություններում գոյություն ունեցող պայմանները,
- նույնը զբոսաշրջիկային արդյունաբերության, առևտրային, մշակույթային եւ զվարճությունների նպատակով գործող հիմնարկություններում,
- պայմանագիր կնքելու առաջարկություն հայտնող կամ առաջարկության պատրվակի դեպքում պայմանները:

Գերատեսչությունը ոչ բոլոր դեպքերում ի րավի միջամտության: Իրավունք չունի միջամտելու, օրինակ՝ ընտանեկան օրենսդրության, բարեկամական հարաբերություններին, եկեղեցական իրավական անձանց կրոնական գործունեության հետ անմիջականորեն եւ կազմակերպությունների անդամների միջեւ գոյություն ունեցող հարաբերություններին, անդամության հետ կապված իրավական հարաբերություններին:

Կարևոր է իմանալ, որ գերատեսչությունը իրավունք չունի քննելու՝ Ազգային Ժողովը, Հանրապետության նախագահին, Սահմանական Դատարանը, Պետական Վերահսկիչ Հանձնաժողովը, հիմնական իրավունքների Օմբուդսմանին, դատարանների և դատախազության պետական իշխանության հետ կապված որոշումները և գործունեությունը:

Ի՞նչ ՊԻՏԻ ՊԱՐՈՒՆԱԿԻ ԽՆԴՐԱՆՔԸ, ԲՈՂՈՔԸ:

Գերատեսչություն ուղված **գրավոր խնդրանքում** հայացողը, պետք է **արժանահավատ նշի ցուցաբերված վնասը**, կամ անբարանպաստ վերաբերմունքը, և **ո՞րն պաշտպանված հատկությանն է խախտման ենթարկվել:**

Խնդրանքում պարտադիր պետք է նշվի նաեւ՝ հայացողի **անունն և ազգանունը, հասցեն, գերատեսչության սպասվող որոշման պարզ ձեւակերպումը, պատահածի տեղը, ժամանակը և զուգակցող այլ հանգամանքների նկարագրումը, մեղադրվող անձի կամ ձեռնարկության հայտնի տվյալները:**

ԻՆՉՊԵ՞Ս Է ՏԵՂԻ ՈՒՆԵՆՈՒՄ ՀԱՅՑԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ

Եթե **գերատեսչությունը** սահմանում է տվյալ գործի պատասխանատվության շրջանակները, որպես **գլխավոր սկզբունք, բանակցություններով պարզում է ներկայացված փաստերը**, անձամբ հարցաքննելով կողմերի բացատրությունները:

Վկաների խնդրանքով, հայտնաց անձնական տվյալներով գերատեսչությունը վարվում է փակ պայմանակարգով, նամանավանդ եթե ընթացակարգին հրավիրված վկաները հանդիսանում են գործատերին ստորադաս աշխատակիցներ:

Հետաքննությունը դոնաբաց է կայանում, սակայն գերատեսչությունը, որոշ դեպքերում, իրավի է գործը վարել կամ մասամբ, կամ լիովին փակ նստակարգով (օրինակ՝ անչափահաս երեխայի դեպքում, հաշվի առնելով երեխայի հետաքրքրությունները):

Ապացուցման կարգը

Հայցողի ենթադրականության պարտականությունը

Հայցողը պարտավոր չէ ապացուցել եղածները, բավական է միայն **ենթադրականացնել**, որ ինչ որ չափով տուժվել է, բացի այդ, իրավախախտման ժամանակ, իրականում կամ սեփական ենթադրության համաձայն, տուժվել է օրենքով պաշտպանված եւ օրենքում թվարկված որեւէ հատկություն: Այսինքն, հայցողի կողմից նշված հատկության պատճառով տուժի է ենթարկվել:

Հասարակության պահանջների բավարարման նպատակով՝ եթե վնասը դեռ տեղի չի ունեցել, պետք է ենթադրել, որ հասարակությունը գտնվում է վնասի ուղակիորեն սպառնանքի ազդեցության տակ:

Ընթացակարգին ներգրավված անձանց կամ կազմակերպությունների ապացուցման պարտականությունները

Եթե հայցողի կողմից ենթադրված, եւ ներքո թվարկվածների շարքին պատկանող որեւէ պարագա, ընթացակարգին ներգրավված մեղադրվող անձինք կամ կազմակերպությունները ազատվում են իրավաբանական պատասխանատվությունից, եթե կարողանում են ապացուցել, որ՝

- հայցողի ենթադրած պարագաները չեն շահում վավերացում,
- հավասարաչափ վերաբերմունքի պահանջները պահպանվել են, քանի որ բացակայում է պատճառական - քննչական կապը պաշտպանվող հատկության եւ հասցված վնասի միջեւ,
- բողոքավորի հայցում նշված դեպքում պարտավոր չէր պահպանելու հավասարաչափ վերաբերմունքի պահանջները (օրենքը շատ սուղ հնարավորություն է թույլ տալիս նման պարագաներին, օրինակ՝ եթե աշխատանքի բնույթով կամ իմաստով է պատճառաբանվում համաչափ գանազանություն):

ԻՆՉ ՈՐՈՇՈՒՄՆԵՐ ԿԱՐՈՂ Է ԿԱՅԱՑՆԵԼ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅՈՒՆԸ

Եթե հետաքննության ընթացքում ապացուցվում է, որ քննությանը ընդունված հայցում **խախտվել են հավասար վերաբերմունքի պահանջները**, գերատեսչությունը, կախված խախտման ծանրությունից, իրավի է նշանակել հետեւյալ պատիժը՝

- վճիռ կայացնել իրավունքները խախտող վիճակի վերացման,
- արգելել հետագայում իրավունքները խախտող վիճակի կրկնում,
- հրապարակել իրավունքների խախտման մասին ընդունված գերատեսչության որոշումը,

- տուգանքի ենթարկել 50 հազարից մինչև 6 միլիոն ֆորինտ չափով,
- որոշում կայացնել հետաքննության ծախսերի վերահատուցման մասին, պարտադրելով վճարել իրավախախտողին:

Մակայն գերատեսչության հետաքննությունը չի կարող որոշում կայացնել ոչ նյութական փոխհատուցման մասին ի օգուտ տուժվողի, եւ ոչ էլ սկզբնական վիճակի վերականգման մասին (օրինակ՝ իրավունք չունի պարտադրել գործատերին, որ հայցողին վերականգնի նախկին աշխատանքային պարտականություններում):

Գերատեսչությունը, որոշում կայացնելուժ առաջ, բոլոր դեպքերում փորձում է կողմերը միջել **փոխադարձ համաձայնության հասնել**: Եթե կողմերը հակամիտում են ցուցաբերում, եւ համաձայնություն է կնքվում կողմերի միջել, գերատեսչությունը իր որոշումով ամրապնդում է այն: Համաձայնության իրականացումը հարկադրվում է նույն միջոցներով, ինչպես եւ իրավունքների խախտման մասին կայացրած որոշումը:

Հետաքննությունը ազատված է տուրքի վճարումից:

ԻՆՉ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՈՎ ԷՆ ՕԺՏՎԱԾ ՔԱՂԱՒԱՅԻԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հավասար վերաբերմունքի պահանջների խախտման պատճառով ընթացող հետաքննությանը, հայցողի գրավոր հավատարմագրի հիման վրա, հասարակական եւ ներկայացուցչական կազմակերպությունները կարող են մասնակցնել որպես հայցողի **ներկայացուցիչ**: Բացի այդ, այս ներկայացուցիչները կարող են օգտվել այսպես կոչված **պատվիրատուի իրավունքով** (ստանալ ծանուցագրեր, գործի նյութերին ծանոթանալ, հայտարարություն անել):

Քաղաքացիական կազմակերպությունները, իրավունքների խախտման կամ խախտման ուղակի վտանգի դեպքում, որեւէ պաշտպանված հատկության (օրինակ՝ սեռ, կաշվե գույն, ազգային պատկանելիություն, թերաժեքություն, սեռական հակումներ, ծագում, աշխարհայացքային համոզմունքներ, քաղաքական համոզմունքներ եւ այլն) կարող են նախաձեռնել **հետաքննություն գերատեսչության առջել**:

Վերը նշված կազմակերպությունները, հավասար վերաբերմունքի պահանջների խախտման պատճառով, **կարող են դիմել նաեւ դատարան, անձի իրավունքների խախտման հիմունքներով, կամ նախաձեռնել քննություն աշխատանքային գործերով զբաղվող դատարանում** (հասարակության պահանջների իրականացում):

ԲՈՂՈՐՔԱԿՈՒՄ ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ԴԵՄ

ՀՎԳ որոշման դեմ **բեկման հնարավորություն չկա**, որոշման դատական վերանայումը հնարավոր է Մայրաքաղաքի Վարչական եւ Աշխատանքային Հարաբերությունների Դատարանում: Դատական քննությունը միայն այն դեպքում կարող է լինել անվճար, եթե հայցատերը անձամբ ազատված է տուրքի վճարումից:

ԳԵՐԱՏԵՍՉՈՒԹՅԱՆ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Փոստային հասցե

1013 Budapest, Krisztina körút 39/B

Հեռախոս: +36 1 7952975

E-mail: ebh@egyenlobanasmod.hu

www.egyenlobanasmod.hu

Դիմողը անձամբ եւս կարող է դիմել մեր համահավասար վարվեցողություն աշխատակիցներին, որոնց հասանելիությունը կարող էք գտնել այստեղ՝ www.egyenlobanasmod.hu



TÁMOP-5.5.5/08/1

„A diszkrimináció elleni küzdelem – a társadalmi szemléletformálás és hatósági munka erősítése”

Egyenlő Bánásmód Hatóság
1013 Budapest, Krisztina krt. 39/B
www.egyenlobanasmod.hu



A projekt az Európai Unió támogatásával, az Európai Szociális Alap társfinanszírozásával valósul meg.